



36.4. ~~67~~
ru-67

POST YAM P.I.

ԽՈՋԻ ԿԱՇԻՆԵՐԸ



1929 — ԿԱՇԿԻ ՍԻՆԴԻԿԱՏ — ՅԵՐԵՎԱՆ

36.4. ~~67~~
ru-67

13 MAY 2013

22.33

636.4:613

01 OCT 2010

h-67

Այր

ԿՈՒԽՈՉՆԻԿՆԵՐ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ

Մնայեք ձեր և հասարակության բարիքը, միջ խանձի և խաշի խոզի կաշին: Հանեք խոզի կաշին ախպես, ինչպես հանում ենք կովի կաշին և հանձնեք պետական կամ կոոպերատիվ կաշի մթերող կետերին:

խոզի կաշին թանգ ապրանք է: Կաշվի գործարանները նրանից պատրաստում են կոշիկ, ձիասարք և գալանտերի զանազան ապրանքներ:


Արտասահմանում խոզի կաշվի մեծ պահանջ կա: Մենք կարող ենք տամնյակ միլիոն ուղղված լինեք շահել, յեթե մեր մորթած և սատկած խոզերի կաշիները հանենք և այնտեղ ուղարկենք: խոզի կաշիների դիմաց մենք այնտեղից կարող ենք ստանալ տրակտորներ, գյուղատնտեսական գործիքներ և գործարանային մեքենաներ:

Արտասահմանում 500 խոզի կաշվի դիմաց կարելի յե ստանալ մեկ տրակտոր: այն ինչ մեզ մոտ ամեն տարի 25.000.000-ի չափ խոզի կաշի յե փչանում, խանձելու և խաշելու պատճառով: Ահա թե ինչ զիստ ե հասցնում կոլխոզնիկն

1964

Գրառուպվար № 6029 (բ) Գատվեր № 1279 Տիրաժ 1000

Պետհրատի լերկրորդ տպարան Յերևանում



15294-57

ու գյուղացին իրեն և ժողովրդական տնտեսութեանը, յերբ մորթած խոզը խանձում կամ խաշում ե:

ԻՆՉՈՒ ՄԻՆՁԵՎ ՀԻՄԱ ԽԱՆՁՈՒՄ ՅԵՎ ԽԱՇՈՒՄ ԵՅԻՆ ՄՈՐԹԱԾ ԽՈՉԵՐԸ

Առաջներում բավականանում եյին միայն յեղջերավոր անասունների կաշիների մշակումով, վորովհետև կաշվի արդյունաբերութիւնը այն ժամանակ խոզի կաշվի կարիք չէր գգում, այդ պատճառով ել վոչ վոք խոզի կաշի չէր գնում: Գյուղացին ստիպված կաշին դեն չէր լու համար, թողնում եր ճարպի վրա, առանց քերթելու միայն խանձում եր մազը և խաշում:

Հարկավոր ե արդյոք ճարպը պահպանելու համար կաշին թողնել նրա վրա:

Ի հարկե վոչ:

Ճարպը առանց կաշվի ավելի հեշտ և լավ կարելի յե աղել, այդ դեպքում նա ավելի համեղ ե լինում, յերկար ել դիմանում ե:

Իսկ ուտելու համար կաշին պիտանի յե թե վոչ:

Ցանկութեան դեպքում կարելի յե ուտել խոզի կաշին, ինչպես և կովի կաշին, բայց դժբախտաբար ե առողջութեանը: Ահա թե ինչու խանձելու և խաշելու ժամանակ կաշվի մեջ մնում ե

խոզանների (մազերի) արմատները, վորոնք ուտելու ժամանակ ընկնելով աղիքների մեջ նրանց վնասում են:

Բացի գրանից կաշին մսի մեկ տասնչորրդի չափ ել սնունդ չի պարունակում իր մեջ, այդ պատճառով գյուղացին քերթելով և ծախելով, ստացած փողով իրենց սննդարար արժեքով կարող ե ավելի միտ ու ճարպ գնել, և իբրև նվեր կատանա մթերոց կետերից մի գույգ կոշիկի պարոչ:


Ինչպես ե հիմա:

Հիմա կաշվի արդյունաբերութիւնը չի կարող բավարարել միայն յեղջերավոր անասունների կաշիներով, վորովհետև նա տարեց-տարի ավելացնում ե իր արդյունաբերութիւնը: Նա հիմա պահանջում ե նայև խոզի կաշիները, վորոնցից կպատրաստի կոշիկներ, ձիասարք և այլ ապրանքներ: Այդ նույն կոշիկներից նա կպատրաստի մեր կարմիր Բանակի համար հանդերձանք և թամբեր:

Այսպիսով հիմա խոզի կաշին դարձել ե այնպիսի ապրանք, ինչպիսին ե որինակ՝ կովի կաշին. գյուղացին կարող ե այն շատ հեշտ ծախել մթերոց կետերին:

Ինչպես պետք ե մորթել խոզը և քերթել նրա կաշին, վոր վոչ կաշին փչանա և վոչ ել ճարպը կտրտվի:

Ամենից առաջ պետք է գիտենալ ու լավ հիշել, վոր խոզին հարվածով շմեցնել չի կարելի, վորովհետև այդ դեպքում արյունը նրա մարմնի մեջ է մնում և միսը փչանում է:




МЕСТО ЗАРЕЗА

Նկ. № 1

Մորթելիս խոզի տակ դարման (բկում) փռել, վոր արյունը կաշին չկեղտոտի և զանա-կով կամ խանչալով (զաշույնով) խփել նրա կողորդին (նկ. 1):


Այնուհետև տասը բոպե սպասիր, վոր ամ-

բողջ արյունը հոսի, վորից հետո ջրով մարմինը լվա օխպես, վոր նրա վրա արյուն չմնա: Լվա-նալուց հետո խոզի մարմինը դիր սեղանի, թաղ-թի կամ մաքուր տախտակների վրա:




Նկ. № 2

Կաշին սկզբում կտրել մորթած տեղից, սկսած կրծքի և փորի վրայով պտուկների մեջտեղից մինչև հետանցքը: Հետո հետին յերկու վոտների հողալարերից (վոլորների) քիչ բարձր, ողակա-ձև կտրվածք արա, նույն-պիսի կտրվածք արա (տես նկ. № 3 և 4) նաև առաջին վոտների վրա ա-




Նկ. № 3




Նկ. № 4

աաջին հողից բարձր: Վոտները վրա արած ողակա-
ձև կտրվածքները միացրու փորի և կրծքի կտր-




Նկ. № 5

վածքին, վորից հե-
տո ձախ ձեռքով
բռնիր փորի վրա-
կտրված կաշվի լեզ-
րից և այն ձգելով,
կաշին զգուշուժյամ
պոկիր ճարպից դա-
նակով (նկ. 5): Դա-
նակը այն պես պա-
հիր, վոր նա պինդ
կպած լինի կաշվին,
ինչպես ցույցե տրը-
ված:



Նկ. № 6




Նկ. № 7

Ցեթե դանակը և կաշին այնպես պահես,
վոր նկարումն ե ցույց տված ապա դու չես
կտրի վոչ կաշին և վոչ ել ճարպը:

Բղերի վրայից կաշին պոկիր մեծ մատով
կամ բոունցքով (մուշտիով) (նկ. 6): Մեջքի կաշին
հեշտ ե պոկվում. վերջապես կտրիր գլուխը այն
տեղից, վոր տեղից խոզը մորթված ե: Գլուխը
կտրիր թշի մոտով դեպի սկանյի դրսի (ար-
տաքին) անկյունը (նկ. 7):

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԿԱՇԻՆ ԱՂԵԼ

Հատակի վրա աղ շաղ տուր և կաշին փոխր
վրան: Կտրիր կաշվի վրա մնացած շարպը: Կա-
շին լավ աղիր, իսկ ծայրերում աղը ձեռքով
տրորիր (նկ. 8 և 9):



Նկ. № 8



Նկ. № 9

Աղած կաշին ծալիր այնպես, վոր խողան-
ները դուրս գտնվեն (տես նկար № 10) մինչև

մթերման կետերին հանձնելը, կաշին պահիր ստվերում և մաքուր տեղում:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԶԱՐՊՆ ԱՂԵԼ

Կաշին քերթելուց հետո, մենք խորհուրդ ենք տալիս

ճարպը կտրել և հանել յերկար շերտերով, ինչպես ցույց է տրված № 11 նկարում: Շերտերի լայնությունը լավ է 13 սանտ. անել: Աղել պետք է մաքուր սպիտակ աղով: (Սոցոր աղը պետք է մանրացնել): Նա-



Նկ. № 11

յած թե ճարպը ինչքան ժամանակ պետք է պահվի, 16 կլգ. աղելու համար կգնա $1\frac{1}{4}$ մինչև $1\frac{1}{2}$ կլգ. աղ:




Նկ. № 10

ճարպի ամեն մի կտորը առանձին վերցրու և ծածկիր այն աղով ամեն կողմից բարակ շերտերով (նկ. 11 և 12): Այսպես աղած ճարպի կտորները գարսիր շարքերով չոր և զով տեղում:

Սոնավ կամ տաք նկուղում ճարպը դեղնում և և ուտելու համար անպետք է դառնում:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՍՈՐԹԵԼ ԾԱԽՈՒ ԽՈՉԸ

Յեթե խոզը մորթում ես, վոր նրա միսը ծախես, ապա միայն խոզի գլուխը կտրիր և փորոտիքը թափիր, իսկ կաշին մի քերթիր:




Նկ. № 12

Կաշին կքերթեն միս մթերողները, վորոնց դու կծախես քու խոզը: Յեթե խոզը առանց քերթելու կհանձնես պետական կամ կոոպերա-

Ամեն տարի մեզանում հարյուր հազարավոր խոզեր են սատկում, զանազան վարակիչ և վոչ վարակիչ հիվանդութիւններէից: Յեթե խոզը սատկել է վարակիչ հիվանդութիւնէից (այդ կարող է ասել անասնաբուժը, յետէ նրան ցույց տաւ սատկած խոզի մարմինը), ապա նրա մարմինը պետք է թաղել, վոր վարակը չտարածվի: Իսկ յետէ սատկել է վոչ վարակիչ հիվանդութիւնէից, ապա անասնաբուժի թուլատվութիամբ պետք է կամ կաշին հանել, կամ խոզի ամբողջ մարմինը հանձնել Սայուզկոժի մթերող կետին:


Վարակիչ հիվանդութիւնից սատկած խոզի կաշին, կամ ամբողջ մարմնի համար, Սայուզկոժից կամ կոոպերացիայից կստանաս մի զույգ կոշիկի կաշի (պաղմյոտկա) առաջին սորս կաշվի ամեն մի կիլոգրամի համար 4 կ. և ճարպի համար ել առանձին:

Պաղմյոտկա տրվում է միայն այն կաշիների համար, վորոնց մաքուր քաշը առանց ճարպի 3 կգ. ավել է:



Նկ. № 13

տիվ կազմակերպութիւններին, ապա նրանցից մի ստացական վերցրու, վոր դու խոզը հանձնել ես կաշվով և խոզանով: Այդ ստացականը Սայուզկոժի, վոր բաժանմունքին ել ներկայացնես, կստանաս մի զույգ կոշիկի պաղմոշ (պաղմյոտկա):




Նկ. № 14

« Ազգային գրադարան »



NL0298065

ԱՆՍ ԹԵ ԻՆՉ Ե ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԽՈՉԻ ԿԱՇՎԻՑ



Կարգալուց հետո գրույկը տուր ընկերոջդ.